

Նաիրա Համբարձումյան



Տեքստ ԵՎ Մեկնություն

Եթե յուրաքանչյուր շարժում փոփոխություն է, ուրեմն որակների փոխաձևումները, ներառելով կյանքը, նախանշում են զարգացումը լայն առումով, հետևաբար էությունները, որոնք ծնվում են նման շարժումներից, ենթադրում են հարցը՝ որն է բոլոր ժամանակներում մեկնարկող փոփոխությունների հավերժական շարժիչը: Իսկ պատասխանը առավել քան միանշանակ է՝ Լինելությունը, քանզի տարածության ու ժամանակի իմաստաբանական հղումները ժամանակի մեջ նախանշում են նախ և առաջ ներկայության մշակութաբանական ընկալումները: Այս ենթատեքստում տարօրինակ չէ, որ Այլ - ա - ժամանակի որոշակի տիրույթում գրողը ու քննադատը կարողանում են վեր կանգնել առօրյա - էկզիստենցիալ որոնումներից՝ հայտնվելով ժամանակի որպես ընթացք ու Արարման միջև, ուր լինելության իրական մոդուսը գիտակցվում է Տեքստ ԵՎ Մեկնություն շրջապատույտում: